«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 դեկտեմբերի 2017 թվականի

2017-2018 ուսումնական տարվա ընդունելության
արդյունքների մասին

Լսելով և քննարկելով **«2017-2018 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների մասին»** հարցը (զեկուցող՝ ընդունող հանձնաժողովի նախագահի տեղակալ, պրոռեկտոր Պ.Ա.Քալանթարյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. ընդունող հանձնաժողովը գործել է ՀՀ ԿԳՆ-ի հաստատած կանոնակարգի պահանջներին համաձայն: Ըստ համալսարանի ընդունելության պլանի՝ առկա ուսուցման բակալավրիատին հատկացվել է 1077 տեղ, որից 66-ը (ներառյալ ՀՀ ՊՆ պատվերով հատկացված 6 անվճար տեղը)՝ ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ, 1011-ը՝ վճարովի ուսուցման համակարգում: Ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ ընդունվել է 77 (այդ թվում 6-ը՝ ՀՀ ՊՆ պատվերով, 9-ը՝ արտոնությունով) դիմորդ, իսկ վճարովի ուսուցման համակարգում՝ 760 դիմորդ: Սփյուռքահայերի համար կազմակերպված հարցազրույցով ընդունվել է ևս 21 դիմորդ: Այսպիսով՝ առկա ուսուցման բակալավրիատ է ընդունվել 858 դիմորդ, որոնցից հրամանագրվել են 806-ը:

Առկա ուսուցման մագիստրատուրայի ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ (անվճար) ուսուցման համակարգ է ընդունվել 167-ը (հատկացվել է 160 տեղ), այդ թվում 5-ը՝ ԼՂՀ-ին հատկացված տեղերի հաշվին: Վճարովի ուսուցման համակարգ է ընդունվել 253 դիմորդ, որոնցից 10-ը ընդունվել են պետության կողմից սահմանված արտոնություններով և ստացել են ուսման վարձի լրիվ փոխհատուցում: Այսպիսով՝ առկա ուսուցման մագիստրատուրա է ընդունվել 420 դիմորդ, որոնցից հրամանագրվել են 415-ը:

Հեռակա ուսուցման բակալավրիատ դիմել է 231 դիմորդ, որոնցից մրցույթով ընդունվել են 188-ը. վճարել և հրամանագրվել են 179-ը:

Հեռակա ուսուցման մագիստրատուրա է դիմել 247 դիմորդ. մրցույթով ընդունվել են 231-ը, վճարել և հրամանագրվել են 205-ը:

Ելնելով վերոգրյալից՝ համալսարանի գիտական խորհուրդը **որոշում է.**

1. 2017-2018 ուսումնական տարվա ընդունող հանձնաժողովի աշխատանքը գնահատել բավարար:

2. Հանձնարարել ուսումնական բաժնին, համապատասխան կրթական ծրագրեր իրականացնող ամբիոններին՝ մինչև 2018 թվականի փետրվարի 1-ը ուսումնասիրել կոնկրետ մագիստրոսական կրթական ծրագրերից ուսանողների հրաժարվելու (չդիմելու) պատճառները և առաջարկներ ներկայացնել կա՛մ դրանք աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցնելու կա՛մ փակելու վերաբերյալ:
3. Հանձնարարել շարունակական կրթության և կարիերայի բաժնին՝ մինչև 2018 թվականի փետրվարի 15-ը ուսումնասիրել դիմորդների ՀՊՏՀ դիմելու դրդապատճառները, հարստացնել ապագա դիմորդներին համալսարանի կայքի միջոցով տրվող տեղեկատվությունը և կատարելագործել դրա տրամադրման ձևերն ու կառուցակարգերը:
4. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել պրոռեկտորներ Մ.Ն.Հարությունյանին և Ս.Ս.Խաչատրյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նիստի նախագահ՝ **Պ. Ա. Քալանթարյան**

08.12.2017 թ.